

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարեկանը 4 ռուբլ:
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և
Արասխանեանի խանութում
Օտարաբաղադրացիք գինում են ուղղակի
Տիֆլիս. Редакция „Маяк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՅԻՆԻՒՆ

Միակ էլքը:— Ն երբ ի ն ա ե ու թ իւ ն:
Պատերազմական ընկեր: Նշու և ինչպէս պէտք է
խօսենք ուսումնարանի վրա: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր:— Արտաքին ա ե-
ս ու թ իւ ն: Թիւրքիա, Գոնաստան: Ֆրանսիա:
Արտաքին լուրեր:— Ս ա ու լ ու լ եր:— Գաղ-
տարարութիւններ:— Տեղեկացոյց:— Բ ա ն ա ս ի-
ր ա կ ա ն: Աղի-Բաղարջ (Վէպ):

ՄԻԱԿ ԵՆԻՔ

I

Մէկ հզօր, լուսաւորված և բա-
րեկարգված պետութեան համար,
ինչպէս Ռուսաստանն է, շատ հա-
ճելի չէ որպէս հարևան ունենալ
Թիւրքիայի պէս անկարգ, խառն
և միշտ խռովեալ զրոյթեան մէջ
գտնվող մի պետութիւն:

Ի՞նչպէս կը վերջանայ, կը վը-
ճովի արեւելեան խնդիրը, ի՞նչ
վերջ կունենայ սկսած պատե-

րազմը, — մեզ յայտնի չէ: Արդեօք
կը լուծվի, կտոր կտոր կընկնի
Թիւրքիան, իր լեկվեղացի ա
կանէ, և Ռուսաստանին հարևան
երկիրները նախկին Թիւրքիայից
կանջատվեն, Ռուսաստանի թէ մի
այլ պետութեան ձեռքը կանցնեն,
— մենք չը գիտենք... Կամ Թիւր-
քիան չի ընկնի որպէս պետու-
թիւն, կը շարունակէ, թէև բա-
ւական կերպարանափոխված իր
գոյութիւնը... Նշոյալէս չը գի-
տենք:

II

Խօսենք Թիւրքիայի այն մասի
վրա, որ մեզ, հայերիս, ի հարկէ
աւելի պէտք է հետաքրքրէ, քան
թէ եւրօպական Թիւրքիան, խօ-
սենք Թիւրքիայի տափական մասի.
Հայաստանի վրա:

Դիցուք թէ պատերազմից յե-

տոյ Թիւրքիան, թէև յաղթված, կը
շարունակէ իր գոյութիւնը որպէս
առանձին պետութիւն, թէև մա-
սամբ կերպարանափոխված, — այն
ժամանակ, մենք հաւատացած ենք,
Ռուսաստանը որ իր գրօշակ է
բարձրացրել արեւելեան քրիստո-
նեաների ազատութեան համար,
նրանց ազատութեան համար իր
արիւն է թափել՝ կը պահանջէ
նոյն մարդկային անհրաժեշտ իրա-
ւունքներ հայերի համար էլ, ինչ
իրաւունքները կը պահանջէ սլա-
վեանների համար, և եթէ այդ
վերջինների համար կառավարչա-
կան ինքնավարութիւն կը պա-
հանջէ, — նոյնը կը պահանջէ և
հայերի համար:

III

Բայց դիցուք թէ պատերազ-
մից յետոյ Թիւրքիան ընկաւ, կը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԱՂԻ-ԲԱՂԱՐՋ»

(Շարունակութիւն և վերջ)

XIII

Տեսարանը նոյնն է: Բեմը վարդապետված է
բնական միջով, իսկ զարդարանքը նոյն բնա-
կան ծառերն ու ձիւնապատ սարերն են, որոնք
կային առաջ էլ: Լուսթիւն է: Հանդիսատեսը
Աստուած ու բնութիւնն է:

Զարի միայնութեան մէջ, այս վայրկեանում,
էլ ուրիշ ոչինչ ձայն չէ լսվում, էլ ուրիշ ոչինչ
չէ նկատվում, բացի այն սուտերից, որ ան
հետաքրքիր շարժումներով, կամային քայլում է դէպի
ձախը: Նա, հաւ ու մաշ եղած, ուրուականի պէս,
եկաւ, մօտեցաւ Սիսակի բնակարանին. փոքր
ինչ ակնաջ դրեց, յետոյ մեծ դժուարութեամբ
մագլցելով բարձրացաւ ծախի կտորը: Վերևում
կանգնած, որպէս մի նոր Աֆրդիտէ՝ լուսթեան
մէջ իր ծովամասն աչքերը ծածանվող — տարու-
բերվող ալիքների ձևով սփռեց չորս կողմում
հանդստացնող բնութեան վրա, տորան, կարծես,
օգնութիւն կանչելու մտքով: Բայց անկեղծ, ան-
գութ բնութիւնը ոչինչ չը նպաստեց նորան
եթէ ոչ իր միօրինակ լուսթեամբ: Հեղին հոգի
միայն որ ասես թէ իր սկսածածքը առնում էր
կրկնից, հանդարտ սուշելով ցրվում էր մեր գի-
ցուհու ցրտած մազերը գեղեցկակազմ ուսերի
վրա... Բայց նա երկար չը սպասեց, ծոնկ չո-
րեց, լայնացրեց նեղ երկրիկի ափերը և ձեռքերը
դէմ դնելով մինչև գոտկատեղը քայլ ընկաւ ու
թոյլ ձայնով շնչացաւ — «Սիսակ ջան...» Ներսիսը
ոչինչ ձայն պատասխան չը տուեց սորան: Այս
օտարտի լուսթեան վրա փոքր ինչ չփոթվեցաւ
չնչողը: Բայց իսկոյն սիրտ առաւ ու յետ տա-
լով մէջքին փաթկած պարանը, որի մի ծայ-
րում կապած էր հունի հաստ գաւազանը, ներս
թողեց պարանի ազատ ծայրը, իսկ միւս ծայրից
կապած մանգաղ խաչաձև գնդիկով երկրի ափե-
րին ընկեց սորանից և գէպի գած սղղաց:

«Սիսակ ջան...» նորից շնչացաւ իջնող համա-
րեան վերջին շնչի մէջ անքող երկտասարդի
զուլը իր ծնկան վրա գնելով ու նորա կրիա-

«Վրոյս զլիւր զուրբան ա, Սանդուխտ ջան,
հոգիս հոգուդ մատաղ: Ես էստեղից զուրս չեմ
գալ, էստեղ կը մեռնեմ ու մեռած տեղս էլ քեզ
կը սիրեմ, չունքի սիրտս սրտումդ, լեզուս բե-
րանումդ ա...»

Բանաստեղծիւնը երկար ձգուեց. վերջը
օրիորդը պնդեց. — «Չէ, գեան (կամ) պէտք ա քեզ
հանեմ, հետս տանեմ, ազատեմ, — գեան պէտք ա
կշտիդ կենամ, մօղ միամ, — հոգիս տամ, որ կըշ-
տանայ երկուսիս կարմիր արիւնովը անկշտում
Արքամի մարդասպան սիրտը, ու աշխարհն իմա-
նայ թէ սիրեկանը սիրեկանի համար մեռնում ա,
զուլը մահու տալիս ու փայ էլ չի ասում սի-
րեկանից բաժանուելիս...»

Սիսակի համար անպատեթիւն էր մահից
փախչելու ու քրոնի պատժից ազատուելն, այն
էլ մի աղջկայ ձեռքով: Նա, որ մինչև այժմ
յուսահատութեան մէջ էր, ազատութեան հնար-
քը պատրաստ տեսնելով փոքր ինչ թեթեւացած
զգաց իւրեան և ընդհանրապէս ինքն սկսեց
ողեւորել թէ իւրեան և թէ օրիորդին. — «Աս-
ած անմեղին չի կորցնիլ: Սանդուխտ ջան, ան-
հոգ կաց. գիտես էս օր ով ա պտուղում մեր
զլիւր վրա: Նրան Բօզ — Զիւսուր կասեն. զու հէնց
գիտես նա էս ամենը չի տեսնում... Տեսնում
ա, տեսնում. համա (բայց) դեռ չի չարանում,
դեռ իր չարութիւնը աշխարհի վրա չի թափում...»

Երիտասարդի վերջին խօսքերը հազիւ թէ լսելի
էին լինում, որովհետեւ նորա մէջ երկար խօսե-
լու էլ ոյժ չէ կար. նա ամեն բառ արտասանելու
համար չորս թէ հինգ անգամ շունչ էր քաշում:
Օրիորդը նկատելով Սիսակի հոգնածութիւնը
էլ երկար չը ստիպեց նորան փախչելու համար:
Նա սպասեց վաղուան օրը, որ նախ Սիսակը
ծուռը բանէր, հաց ուտէր, կաղաւթիկէր և ապա
հնչաւ կը լինէր փախչելու համոզանքներ:

Եւ նա խօսքը փոխելով պատմեց թէ ինքն ինչ-
պէս ամեն իրիւրեան գալիս էր տառից գաղտնի
ծախի շուրջը պտուղում, էլ տուն դառնում ու
տատին խաբում. թէ վերջապէս մտածելով ինչ
հնար գտաւ ծախը մտնելու և իրան ազատելու:
Թէ զիւղումն ինչեք են պատահել այս չարաթի
և թէ ինչքան աշխատեց, որ Աղի-Բաղարջը բե-
րէր. բայց չը կարողացաւ: Շատ էլ լաւ եղաւ,
որովհետեւ Սիսակին այնպիսի զրոյթեան մէջ էր,
որ Աղի-Բաղարջն ուտելով նա անուշտ փչելու
էր հոգին: Սիրեկանները այս դէպքում պարտա-
կան էին նախախնամութեանը որ կարծես առա-
ջուց տնօրինել էր այնպէս, որ Արքամը արդէն
լինէր այս բանում և ինքը միայն թաթկալէր

XIV

«Շուշան, դու էս ժամանակին ինչ ես չինում
էստեղ...» լուսեցաւ Մակնի կօպիտ ձայնը:

— «Իսկ ինչ անեմ, որ էստեղ չը լինեմ...
Ասածուցն անհեղ ձեռ պատիժը. տղիս տուն
էք քցել, ես էլ տանը հոմ երեսին մտիկ տամ:
Սիսակին էստեղ չօրում հոմ ուտողին (պաշտ-
պանութեանը) թողեմ...»

«Գէ, լաւ, դուքիցը ետ քաշվի: քրոնի նրա-
մայեց, որ Սիսակին ազատեմ, չունքի Սուրբ
Սարգիսը Արքամի վրա չարացել ա իր ընտան
բանի վրա, Աղի-Բաղարջի պատառը մնացել ա
բողազում ու խեղճին խեղճում ա:

Չարմացած պառաւը դժուարանում էր ըմ-
բռնել Մակնի քարոզած աւետար. նա չէր հա-
ւատում ականջներին, ուստի դեռ ևս նոր տա-
րածվող լոյսի տակ նայելով, բայց լաւ չորոշելով
Մակնին, նա կարծեց թէ իր հանդէպը կանգնած
է ոչ թէ զգրեղ, այլ ինքը Սուրբ Սարգիսը, հե-
տեաքար ընկնելով նորա ոտքերը աղերսեց —
«Անունիդ մեռնեմ, ով Սուրբ Սարգիս, քու լու-
սին զուրբան, էդ մնց ա միտք ես արել ու
աղօթքս լսել... Ոտիդ տակին մեռնեմ, դու էլ ա

—Այ, Պոլսը մահմեդական մայրաքաղաքն էր, անարվելուց և Սուլթանի պալատի առջև հա-
պարվելով պահանջում էր, որ Սյուսիմ ֆաշան
քաղաքներից վերադարձած լինի։ Սուլթանը
ժապ հաջառ քաղաքից ղուրս գտնվող պալա-
տում։ Ապստամբների գեմ հրամայած է զորքերը
հանգեցնել։ Զորքը հրացաններ արձակելով մո-
լորդի վրա, չատերին սպանեց և չատերին էլ
կրակեց։

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ